



ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ
Տարեկան . . 12 ձր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Իրիւ թիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԿԱ
Տարեկան 2,60 Տօլար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Ծրանշցման տողը
20 սանդիլ

ՀԱՍՑԷ

Rédaction du journal

„Iraouunk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

Иравункъ

РНА (България)

Գրութիւնք եւ
չեմ տրուիր

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Դաշնակցականներէ կազմուած աւագակախութիւն մը վրաս յարձակելուն առթիւ՝ ամէն կողմերէ ելած ցաւակցական եւ այդ յարձակումին փառաւոր վերջաւորութեան առթիւ՝ խնդակցական արտայայտութիւններու մասին շնորհակալութիւնս կը յայտնեմ:

3. ԳՈՒՐԴԷՑ

ԴՐՈՇԱԿԵԱՆ ՊԱՏՈՒՃԱՍԸ

Տէր Խմբագիր,
Թախանձագին կը խնդրեմ ձեզմէ որ այս նամակս նոյնութեամբ հրատարակէք:

Իրաւաւոր վերջին թիւը մանրամասնօրէն տեղեկութիւն կուտայ յարձակումի մը մասին զոր Դրոշակեան մէկ քանի գործիչներ ձեր վրայ փորձեր են:

Նախ հաճեցէք ընդունիլ շատերու հետ իմ այ նշաւափուսու ու զգացած զգուանքս եղած վատութեան համար, ու համակրանքս այն աներկիւղ ու յարատեւ կորովին համար որով «Դրոշակեան Պատուհաս» նկատուող դէպքերը հրատարակելու ու սինթըրները դիմակալած ընկնող համար սօվիալիստներու մոլեգնութիւնը ձեր վրայ հրաւիրեմ էք:

Թող տուէք որ ըսեմ թէ այս առթիւ ձեր վարմունքը, տարակոյսի հետքն իսկ չը կայ, պուլկարահայ հանրութեան ստուար ու ընտրեալ մեծամասնութենէն տարիններէ ի վեր պէտք եղածին պէս կը գնահատուի. ծանօթ է թէ առաջին անգամը չէ որ իրաւաւոր անողորմ հալածիչը կը հանդիսանայ իբր թէ հայ յեղափոխականի նուիրական անունով գործող կարգ մը Դրոշակեան Ստահակներու փողոցի շահատակութեանց. ծանօթ է թէ առաջին անգամը չէ որ իրաւաւոր անխղճաբար կը հետապնդէ ու զայրագին դիմակալած կը իբր թէ հայ յեղափոխութեան նուիրական գրօշին ներքեւ գործող թագուն կուս հրապարակային աւագակները:

28 Միտուկի գողութեան խնդիրը, որ այսօր Դաշնակցութեան պաշտօնակներին մէջ իսկ կը ծեծուի, Տիկնանց մասնախմբի գողութեան խնդիրը, որուն վրայ Պալքանեան կոմիտէն կամայ ահա՛ մայր Պ. Վարդոն ընդհ. ժող վրայ անգամակցութեան վտարելու հարկ տեսաւ, իրաւաւոր անողորմ մերկացումներուն արդիւնքը չէ՛ն միթէ. ո՞ր թերթին էր որ եռանդուն յարատեւ պայքար մը մղեց տարի մը առաջ, կարգ մը Դաշնակցական Սրիկաւերու դէմ, որոնք Սարաֆովի ու անոր գործակիցներուն աջակցութեանը ապաստանած, սովիաները ձեռքերնին, իբր «անակնկալ մանանայ» մը պուլկարահայ հարուստներու վրայ խուժելու կը պատրաստուէին:

Ո՞ր թերթին էր որ բոլոր այս իբր թէ հայ զոհողներու յիշատակէն, հայ տառագրաւորներու օգտին գործող ապիրատութեանց ու խայտառակութեանց դէմ անընդհատ գործելէ ետք, վերջ ի վերջոյ Սիւրճեանական խմբակներու կազմակերպութիւնը յաջողեցնելով, Դրոշակեան վոհմակը հակակշռեց ու չեզոքացուց:

Վերջապէս ո՞ր թերթին էր որ կատարեալ անշահախնդրութեամբ մը Դրոշակեան զրպարտութեանց ու կեղծարարութեանց զոհ բոլոր աշխատող ազգային անձնաւորութեանց դատը ստանձնեց, պաշտպանեց Արփիարը, Գաբրիէլեանը, իսկէնտէրը, Զօպանեանը եւ այլն:

Ու այսօր, պէտք կայ չսփառանց զարմանալու երբ կը տեսնենք ա՛յլ անզուսպ մոլեգնութեան հասնող կատաղութիւնը Դրոշակեան գործիչներու, մէջտեղէն վերցնելու համար մարմինը այն մարդուն որ հակառակ իրեն խոստացուած առատ ու լիարուստ վարձատրութեանց, իր թերթը Դրոշակեան Սրիկայութեանց տրամադրելի չընելէ ետք, տարիններէ հետէ արգելք կըլլայ պուլկարահայ գաղթականութիւնը ապականելու համար անոնց բանեցուցած սադրանքներուն, դրամ շորթելու համար անոնց յղացած հնարքներուն: Ու Դրոշակեան գործիչներու համար

միթէ այնքան նո՞ր երեւոյթ է զիրենք տագնապող, իրենց ազգադաւ արարքները ուժգնօրէն նշաւակելու ու անոնց ընդդիմադրու ազգասիրութիւնը գործող պատուական անձնաւորութեանց կեանքին ու պատուին դէմ դաւելու դրութիւնը. այս մասին տակաւին անստոյգ եղողները կրնան աչքէ անցնել Տաշրուի այն թիւերը որոնց մէջ Ոսկան Նազարեանց—Վասպուրականի Դաշ. ընդհ. նախկին ներկայացուցիչ—արտօնող ազգող տղերքով կը նկարագրէ մէկիկ մէկիկ իրենց անուններով, տեղերով ու մանրամասն պարագաներով այն բազմաթիւ եղբայրասպանութեան դէպքերը զոր Դրոշակեան ահաբեկչները գործած են եւ որոնց ինքը կամայ ահամայ ահանաւոր կամ գործակից եղած է:

Եղբայրագաւառութիւնը միշտ Դրոշակեան գործունէութեան մէջ յաջողութեան ամենակարեւոր ազդակներէն մին նկարուած է, այնպէս որ ոչ իսկ պաշտօնակներով Դրոշակ խոհեմութիւնը կուենայ արձանագրելէ զգուշանալու Ֆիլիպէ Էսայեանի կրած յարձակումը:

Սակայն Դրոշակեան այս խաղաղութեանց դէմ իրաւաւոր պայքարը բոլորովին անարդիւն ալ մնացած չէ. ու ձեզի դէմ անոնց այս մոլեգնի յարձակումին իսկ գերազանց ապացոյցը, հրապարակային խոստովանութիւնը չէ՞ որ ապիրատները իրենց ազգադաւ շահատակութեանց մէջ իրենք զիրենք մահացու կերպով հարուածուած կը զգան. ու միւս կողմէ պուլկարահայ գաղթականութեան կողմէ իրաւաւոր տարիններէ ի վեր գտած շեղմ ընդունելութիւնը կարելի՞ է տարբեր բանի մը վերագրել քան հաւանութիւն մը Դրոշակեան Ստահակներու դէմ մղուած պայքարին:

Թող ուրեմն Դրոշակեան յեղափոխականները—իրենց ասպարէզին վատագի դաստիարակները—թող զէնքերնին թուրք ռեժիմէն հալածուող, թուրք ռեժիմէն դէմ կուող հայ երիտասարդներու,

հայ խմբագիրներու, հայ վաճառականներու ուղղին. յստակապէս կըմբռնեմ թէ ապիրատներուն համար շատ աւելի դիւրին, շատ աւելի յաջող ըլլայ իրենց յեղափոխական—հերոսի քաջագործութիւնը անգէն հայերու վրայ փորձել, անփոյթ կերպով իրենց գործին գացող անհատները յանկարծակիի բերելով, քան քիւրտ ու թուրք զինակիրներու դէմ. ու իրաւ կը խորհիմ թէ իրենց արինակիցները, իրենց հալածակիցները վատաբար—գիշեր ատեն—կուսակի կողմէն սպաննել փորձող Սրիկաները չեն որ կոչուած պիտի ըլլային Հայերու դատաւոր արիւնին վրէժխնդիրները ըլլալու գերագոյն անձնագոհութիւնը յանձն առնել: Անոնք իրենց դերին մէջն են անպաշտպան Հայերու վրայ յարձակելով. այսպիսով, աներկբայ, անոնց հերոսի քաջութիւնը գոհացում կը գտնէ, առանց կաշիին վրայ տալու երկուդի:

Այս վատութեանց երկուդէն չէր որ իր պարտականութեան, ազգային դժբաղդութեան մէջ իր կոչումին գիտակցութիւնը ունեցող ամէն հայ պիտի ընկրկէր. ու եթէ ճակատագրուած է թէ մեր ժողովուրդը դեռ նորանոր զոհերու ծարաւի է, իրականութեան վերահասու ըլլալու ու սթափելու համար, ի՞նչ փոյթ եթէ իրենց պարտականութեան զոհ քանի մը անմեղներու արիւնը կը խափի:

Տ. Էրմասեան

Սիւրստէ

ԹՂԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՐԻՉ, 9 Օգոստոս

Հայաստանի մասին. — Կիպրոսէն՝ երէկ գործակալութեանս հասած հերագիր մը կըսէ թէ. «Հայաստանի վիճակը անտանելի է. խուժար խուժար քիւրտեր ամէն կողմ կը թալնեն եւ կը կոտորեն: Սղերդի քաղաքապետը ուղեւոր մօտակայքաղաքը երթալ օգնութիւն խնդրելու, ճանապարհին սպաննուած է. քիւրտ պետերը վանողլու (.) գիւ-

զը թալանի տալով, կինները իրենց վայրագութեան զոհ դարձնուցին, որոց չատերը մեռան քիւրտերու վայրենութենէն»

Հայ պատրիարքներու խնդիրը. երկու ամիսէ ի վեր երկու հայ պատրիարքները հրաժարականի խնդիր մը ունին. Որուն վրայ ա. մէն օր կը խօսին, մանաւանդ Գրիգորեաններու (Հուսաւորչական) պատրիարքին հրաժարականը կատարեալ կատակերկութեան մը գոյնն առաւ. Օր մը լուր կը տարածուի թէ պատրիարքը հրաժարեր է՝ մէկ ժամ յետոյ հերքուեր է այդ լուրը, ուրիշ անգամ մը պատրիարքը իւր պալատէն դուրս չելլելուն՝ հիւանդութեան կամ ուրիշ պատճառի մը համար, լուր կը տարածուի թէ պատրիարքը ա'լ հրաժարեր է եւ չուզեր հայերու գործերով զբաղիլ... վերջապէս՝ հրաժարելու եւ չհրաժարելու լուրը այնքան յաճախ կրնկնուեցաւ որ Կ. Պօլսոյ պաշտօնական շրջաններէ և հայ ազգաբնակչութիւնը միայն այն ժամանակ պիտի հաւատան հայ պատրիարքին հրաժարականին երբ իրօք անոր տեղը ուրիշ մը տեսնեն:

Գալով կաթողիկ հայերու պատրիարք՝ Էմանուէլին, սա քարի նման պինդ մարդ մը կերեւի. Այս ալ հրաժարականի խնդիր մը ունի, որուն ինքը կարեւորութիւն իսկ չի տար. կարգ մը հայ կաթողիկ եպիսկոպոսներ՝ դժգոհ էմանուէլի վարչութենէն, բողոքագիրներ զրկած են եղեր Հռովմայ Ս. Պապին և խնդրած են պաշտօնանկ ընել Էմանուէլ պատրիարքը: Պապը կը հրամայէ պատրիարքին հրաժարականը տալ... բայց պատրիարքը Պապին խօսքը յարգելով հանգիստ կը պատասխանէ թէ ինք

պատրիարք ընտրուած է և պատրիարք ալ պիտի մեռնի, հրաժարական—մրաժարական չհասկնար... Ոմանք կըսեն նոյնիսկ թէ պատրիարքը աւելի խիստ լեզու մը գործած է և ի միջի այլոց ըսած է՝ վերը Աստուած վարը Սուլթանը կը ճանչնամ (•) և ոչ ոքի իրաւունք կը ճանչնամ զիս պատրիարքական գահէս վար իջեցնելու... (•) Ուրեմն կաթողիկ պատրիարքին հրաժարականի խնդիրը միանգամ ընդ միշտ վերացած է, մարդը չուզեր հրաժարիլ, վէսէլամ:

Մելիք Ս. Դաւիթ Բէկ

ՌՈՒՍ ՄԱՍՈՒԼԸ

Ա.

Ռուսիոյ մէջ մէկը որպէս զի թերթ մը հրատարակէ, պէտք է ներքին նախարարէն արտօնութիւն ունենայ բան մը որ սովորաբար կը զլացուի. պարտաւոր է խմբագրապետին անունն ալ իմացնել, որ կրնայ նախարարին հաւանութիւնը չը գտնել, պարտաւոր է իր ծրագիրը ներկայացնել, այսինքն ապագայ թերթին թիւը ու զանազան վերնագիրներու տիտղոսները. պարտաւոր է բաժանորդագրութեան գները իմացնել, զոր իւրաքանչիւր թիւի գներն պէս առանց մասնաւոր նոր արտօնութեան մը չը կրնար փոխել. պարտաւոր է խնդրագրին մէջ յիշատակել թէ հրատարակել ուզած պարբերականը ամենօրեայ պիտի ըլլայ, չաբաթօթիթ թէ կիսաշաբաթօթիթ:

Ներքին նախարարութեան մամուլի մասնաճիւղը, այսպիսի խնդրագիր մը ընդունելուն, ոստիկա-

նութեան միջոցաւ մանրակրկիտ ծանօթութիւններ կը քաղէ տպագրիչին ու մանաւանդ հրատարակչութիւնը թերթին հաւանական խմբագրապետին վրայ, ու եթէ այդ ծանօթութիւնները կատարեալ, բացարձակ ստուգութիւն մը չընծային թէ խնդրակները հետ պիտի չըլլան յարձակելու «իրերու գոյութիւն ունեցող կարգ»ին վրայ, ինչպէս Ռուսիոյ մէջ վարչական բարձրագոյն կըսեն, արտօնութիւնը կը զլացուի:

Թէ թերթ հրատարակելու փափաքող անհատ մը նախապէս կառավարութենէն արտօնութիւն խնդրէ, այս բանը դիւրաւ կ'ընդունուի եթէ թերթը առեւտրական ձեռնարկութիւն մը համարենք:

Արդարեւ Ռուսիոյ մէջ ոչ ոք կարող է առեւտրական տուն մը բանալու, նպարածախս, գինեւաճառ կամ ինքնաշարժ մեքենայ շինող, պարտի ելեւմտական նախարարէն հրաման ունենալ: Գալով խմբագրապետի անձին վերաբերող ձեւակերպութեանց անոնք նուազ հասկնալի են, քանի որ ամէն թերթ գրաքննութեան կենտրոնի, զոր կուսակալները կամ անոնց օգնականները ի գործ կը դնեն: Մայրաքաղաքներու մէջ թերթը նախապէս ընենք պարտաւորիչ չէ, բայց այս երեւութեան ազատութիւնը՝ որ շատ դժուարաւ ալ կը արուի, կառավարական խոհական նախատեսութեան այնքան միջոցներով կը չեղոքանայ որ իրապէս աւելի փտանգնիր քան առաւելութիւններ ունի: Այսպէս, երբ յօդուած մը ներքին նախարարին հաճոյ չգայ, սա թերթին ձեռքէ ծախուիլը աւելի կամ նուազ երկար տեւի մը համար արգելելու կարող է. ռուս

թերթի մը ելեւմտքին խարխիւր եղող ծանուցումներու տպագրութիւնը կրնայ արգելիլ, երբեակի ազգաբարձութենէն ետք որոշեալ ատենի մը համար թերթը դադարեցնել կամ զայն ջնջել. վերջապէս առանց ազգաբարձութեան ալ կրնայ թերթը ջնջել, համախորհուրդ իր դատարանն ու հանրային կրթութեան պաշտօնակիցներուն ու Սրբազնագոյն—Սինօտին Մեծ—Դատարարին հետ որ ինչպէս յայտնի է Պ. Բուպիտեմոնչիկ ինքն է, հանրաժանութեան անձնաւորութիւն մը զոր հանրութեան ներկայացուցիչութեամբ չը կայ, Սեկան առանց ազգաբարձութեան եղած այս խափանումները հազուադէպ են. փոխարէն, եթէ գրաքննութեան թերթ մը խափանելու վրայ խնդիրն ըլլայ, երկար բարակի չեն նայիր. վաճառի, բան մը որ անտրամաբանութեան յետին աստիճանին կը հասնի, նոյնիսկ գրաքննութենէ անցնող թերթերը երբեմն կը խափանուին:

Այսպէս մէկ կողմէ գրաքննութիւնը, միւս կողմէ վարչական միջոցները իշխանութեանց բաւական են աւելի թերթերու խոհական վարժունքը կերակրելուն, ինչպէս ուրեմն տպագրիչին կողմէ ներկայացուած խմբագրապետի անցեալը ու ներկան պրպտիւրը ալ պէտք է: Ռուս մամուլի հրատարակութեան պայմանները անհատական նախաձեռնութեան ազատութիւն չեն թողուր, ու ռուս յօդուածագիրը, անիշխանական ըլլալ թէ արմատական, եթէ հանրութեան խօսիլ կուզէ, չափաւոր ու կռաւարական ձեւով խօսելու պարտաւոր է:

Թարգմ. «Ռուսիոյ Տէ Ռուսիոյ»
(Շարունակելի)

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(2)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՐԱԻՇ...

Կէս օրուան մօտ էր: Արեւը՝ թուխ ու մաշկ ամպերու տակ ծածկուած ըլլալով, կիզիչ տաքութիւն մը չէր թափեր բերքին վրայ: Այդ պահուն պարիսպին դուռը ցնցոտիներ հագած մարդ մը կանգ կառնէր: Այս մարդը տէրիւն մըն էր... Հագելու յիսունի մօտ տարիք մը ունէր. բարձրահասակ ու չափազանց ոսկրուտ կազմուածքով մէկը կերեւար: Խորին ապշուածամբ մը պարիսպին ու դուռին նայեցաւ, յետոյ ձեռքին երեսնուէ հաստ գաւազանը մէկ կողմը դրաւ ու նստեցաւ: Երկայն, ալիսա՛ն ու գրեթէ խիւ խիւ եղած մօրուք մը ունէր, որ թաւ պիւնրու հետ միանալով բերանը ծածկած էր. աչքերը փոքր ինկած էին... իսկ մեծեւտիկ կերպարանքը խորհրդաւոր, ցա-

ւատա՛նջ ու մթին արտայայտութեան մը երեւոյթովը կը պատկերանար: Հագած էր արապ տէրվիչներու յատուկ տիգրիկ մը, որ մինչեւ ծուռեքը կիջնար եւ կը ծածկէր իր արեւախառն ու մազոտ զիտերու ամբողջութիւնը: Կագած էր կտաւէ հաստ շապիկ մը, որմէ աղտեղութիւն մը կը թափէր: Կաշիէ թելով մը կապուած նուսխա մը կար վզէն, որ կուրծքին վրայ կը կախուէր եռանկիւնաձեւ ծալուածքով մը: Մէկ ուսէն տոպրակ մը, իսկ միւս ուսէն կօտ մը կախուած էր: Գլուխը դրած էր խառնուրդ նաշխերով հիւսուած արախշի մը: Տէրվիչը ծալապատիկ դիրքով մը՝ դուռէն քանի մը քայլ հեռու, պարիսպին ամենէն հովանաւոր ու զով տեղը նստած էր ու կը մտածէր: Թիարանին վերատեսուէր, որ Լուծֆի աղա կը կոչուէր, պարիսպին այդ դուռէն տունը կը վերադառնար: Բայց տեսնելով տէրվիչի մը զթալի կացութիւնը, մօտեցաւ անոր եւ յարգական ձայնով մը հարցուց. — Ի՞նչ կը մտածես, տէրվիչս: — Ե՛ս, բացազանչեց տէրվիչը խոր մտածումի մը սթափելով: — Այո՛, դո՛ւն... կրկնեց Լուծֆի աղա: — Հը՛ր մ... ժպտեցաւ տէրվիչը՝ զուլաւ երեքընելով: Ի՞նչու կը հարցունես, տէ՛ր իմ... Ի՞նչու կը զարմանաս մտածումներու վրայ... մաշկը ըսածը առանց մտածելու կրնա՞յ ապրիլ: — Բայց երբ վիշտ մը չունենայ մարդս, ի՞նչու մտածէ, յարեց Լուծֆի աղա հետաքրքրուած ձայնով մը:

Տէրվիչը հեգնական շարժումով մը դուռը վեր վերցուց ու Լուծֆի աղայի աչքերուն նայելով ըսաւ. — Միթէ՞ կայ մարդ մը որ վիշտ չունենայ, պէ՛յ էֆէնտի: Հսկ կուզեմ թէ աշխարհը տառապանաց հովիտ մըն է... ան՝ որ կը զգայ, ան՝ որ կը թափանցէ խորունկ կերպով, կը պարտաւորուի մտածել: Լուծֆի աղա չկրցաւ առաքելի. Տէրվիչը ճիշդ անոր սրտին մէջ ուղղած էր հարուածը: Հետեւաբար կասաց մը ձեռքը դրաւ անոր ուսերուն վրայ եւ համակրական շեշտով մը հարցուց. — Ո՞ր կողմերէն եկած ես, տէրվիչս: — Տէրվիչը մարդկութեան առաքեալն է, պէ՛յս. նկատել տուաւ այդ Աստուծոյ մարդը, անկաւ ամեն երկիր, ամեն կողմ կը թախառի: — Խիստ լա՛ւ. կը փափաքի՞ս քանի մը օր քովս մնալ: — Ի՞նչու չէ... ամենա՛յն սիրով: Ես բարի մարդերու համար կը թափառիմ... — Ենթահակալ հմ... ուրեմն վաղը կրնանք տեսնուիլ, այնպէս չէ՞: — Պատրաստ եմ... մոմիջեց տէրվիչը՝ եւ մօտեւալով իր գողտչուն ձեռքը տուաւ վերատեսուէ Լուծֆի աղային, որ սեղմեց ու հեռացաւ: Տէրվիչը միշակ մնաց: Երբ Լուծֆի աղա բաւական հեռացած էր, ինքը մտքեւտաբար ոտքի ելաւ ու ինքնիրեն մոմիջեց. — Աստուած իմ, առաջնորդէ քայլերուս... Թետոյ դէպի քաղաքը յառաջացաւ: Հետեւեալ օրը Լուծֆի աղա զարձեւալ պարիսպին

ՀՈՒՓՈՒՄԵՆՅՈՒՆ ԲՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՈՒՌՅԱՆԻՔԻ

Հոգաբարձութիւնս իր վերջին չըր-
ջանի տեղեկագրին նախարարին մէջ՝
քաղաքիս կրթական գործին անցեալ
շրջանները յիշած ատեն՝ սխալ տեղե-
կութիւն մը տուած ըլլալով՝ ներկա-
յիւս կը փութայ զայն ուղղել։

1876-ին տիկիններէն չէ որ կազ-
մուած է Հոսիսիմանց Բնկերու-
թիւնը, (ինչպէս սխալմամբ գրուած
էր մեր տեղեկագրին մէջ) որ աղջկանց
համար առաջին կանոնաւոր վարժա-
րանն է հիմնած եւ զոր բարեկարգ վի-
ճակով մը վարած է աւելի քան 9 տա-
րիներ միայն թրք-Ռուսական պատե-
րազմին ատեն 1 ուկէս տարւոյ չափ
զաղորդով։

Կարծէ սոյն Հոսիսիմանց Բնկերու-
թեան պատմութեան վրայ ծանրանալ
քիչ մը, որ քաղաքիս անցեալ կրթա-
կան գործին մէկ գիղեցիկ դրուազը
կը կազմէ, եւ որ երեւան կը բերէ
Ռուսներէ հայ աղջարնականութեան
կրթասիրական ոգին եւ մանաւանդ
ձեռնբերութիւնը։

1876 Յուլիս 31 ին կը կազմուի ըն-
կերութիւնը նախաձեռնութեամբ Տիար
Մաթաթի Բէթէնեանի, որ Աստուածա-
տը կընտրուի ընկերութեան, եւ ան-
դամները կըլլան՝

Մեծ. Տիարք

- Արթիւր Ասլանեան Աստուածաբան
- Փիլիպոս Սայեան Համարակալ
- Յակոբ Հաճի Ստեփանեան Գանձապետ
- Կիւմրիշ Մկրտիչեան Հաւաքիչ
- Յովակիմ Ինճեան »
- Ալիքան Սրբիսեան »
- Գրիգոր Կարապետեան Խորհրդակց
- Աւետիս Վարդանեան »
- Ալթուն Մանուկեան »
- Օհան Փարսեան »
- Գէորգ Օվանքեան տեսուչ վրձնի

Բնկերութիւնը կազմուած ատեն,
Տէր Կարապետ աւագ քահանայի, իր
վարժապետութեան օրով, բացած աղ-
ջկանց կրթարանը տարիներ առաջ ար-
դէն փակուած է եղեր։

Բնկերութիւնը կազմուելուն պէս՝
կանոնադրութիւնը Թագ՝ Խորհրդին

կը ներկայացուի վաւերացնելու հա-
մար։

Բնկերութեան կանոնաւորութեանը
եւ օրինապահութեանը վրայ գաղա-
փար մը տալու համար կարծէ յիշել ի
մէջ այլոց սա յօդուածը թէ՛ ո եւ է
անդամ երբ բացակայ գտնուի նիստէն
առանց բանաւոր պատճառի կը պար-
տաւորի 20 զրուշ տուգանք տալ։ Ու-
րիշ յօդուած մը կը տրամադրէ եղեր ա-
ռանց Աստուածաբանի եւ համարակալին
ստորագրութեան դրամ չի հանել սըն-
տուկէն։ Այս առթիւ սիրուն անէքտօթ
մը։

Անձ մը՝ օր մը կը դիմէ գանձապե-
տին ու 20 ֆր. փոխառութիւն մը
կընէ 4 օրէն դրամը վերադարձնելու
պայմանաւ, ու կը խոստանայ տալ 20
զրուշ տուգանք։ Արդարեւ դրամը օրին
կը վերադարձնէ եւ խոստացած 20
զրուշն ալ կը յանձնէ։ Առաջին նստին
ամեն անգամ իր ժողոված նուէրները
յանձնած ատեն, գանձապետն ալ իր
առած տուկոս 20 զրուշին համարը կու-
տայ։ Ժողովը սակայն չնորհակալ մնա-
լով հանդերձ այդ 20 զրուշի հասոյթին
համար, գանձապետը կը գատապարտէ
20 զրուշի տուգանքի, այն պատճա-
ռով որ սնտուկէն՝ դրամ հանած է ա-
ռանց օրինական ձեւակերպութեան։

Բնկերութիւնը կազմուելէն քանի
մը ամիս վերջը հարկ եղած դրամա-
գլուխը գոյացնելով տուն մը կը վարձեն
եւ զայն կը վերածեն աղջկանց վար-
ժարանի, ամբողջ գրասենտները եւ
բոլոր ներքին պիտոյքները հոգալով։

Բնկերութեան հասոյթներն եղած
են Կանանց շրջանակին մէջ պարտ-
ցուած գանձանակներ, աշակերտուհի-
եաց թոշակներ, բաժնեգրիներ, զորս
վճարած են ընկերութիւնը կազ-
մող վերագրեալ անձերը, ու զանազան
ներէ նուիրահաւաքում։ Այս վերջին
հասոյթը, ընկերութեան առաջին
տարիները խիստ բեղմնաւոր եղած է,
Աստուածաբանի, Տէր Մաթաթի Բէթէնե-
անի ջանքով մանաւանդ, որ, նոյն
ատեն, քաղաքին կուսակալութեան
արտաքին յարաբերութեանց զիւանդի
պաշտօնեաներէն ըլլալով բոլոր իրեն
հետ յարաբերութիւն ունեցող անձե-
րէն յանուն ընկերութեան նուէր
հաւաքած է։

Դպրոցը ունեցած է 60-70 աշակեր-
տուհի, որ Պոլսէն յատկապէս բերած
վարժուհիներով կառավարուած է։

Բնկերութիւնը իր սկզբնաւորութե-
նէն 1876 Յուլիս 31 մինչեւ լուծման
օրը 31 Հոկտեմբեր 1887, 17300 զրուշի
հասոյթ մը ունեցած է։

Բնկերութիւնը ոչ միայն իր հա-
սոյթներովը դպրոց կառավարած է շատ
մը տարիներ, այլ նաեւ հասոյթաբեր
կալուած մը գնած է 100 ոսկի արծէ-
քով, եկեղեցւոյ զանգակատան շինու-
թեան մասնակցած է 7 ոսկի տալով,
ու պատերազմի ատեն ալ կարգ մը
աղջայիններու օգնութիւն ընձեռած է։

Բնկերութիւնը ամբողջ 11 տարի,
զայն կազմող անդամները վարած են,
միայն աստեղծաբեր վերջին տարիները
բացակայած ըլլալով քաղաքիս գործօն
մասնակցութիւն մը չէ ունեցած։

Բնկերութեան ծրագրին մէջ եղած
է աղջկանց յատուկ վարժարանի մը
շէնքին կառուցումը, որուն համար
Աստուածաբանը իր բարձր շրջանակի մէջ
ունեցած յարաբերութենէն օգուտ քա-
ղելով՝ հիւպատոսներու միջոցաւ գի-
մուծներ ըրած է կարեւոր օտարագրի-
ներու՝ սակայն պատերազմին ծագումը
արգելք եղած է այդ գիղեցիկ նպատա-
կին իրագործման։

Այսքան լաւ սկսուած ու յաւաքոյն
կերպով ալ շարունակուած սոյն ընկե-
րութիւնը օր մը սակայն լուծուած է
ու դպրոցն ալ գոցուած։ Ու ցաւալին
եւ մանաւանդ ուշագրաւը այն է որ
ընկերութիւնը ինքնին չէ որ կազմա-
լուծուած է, հետզհետէ պակսելով
զայն վարող անձերուն եռանդը ու ա-
տոր հետեւանք՝ դրամին կամ հասոյթ-
ներուն նուազիւ, բնականաւոր, ու
րովհետեւ ընկերութիւնը դադարած ա-
տեն 5 սանթրիմ պարտք չունենալէն
զատ, պատրաստ դրամ ունեցած է 75
նարոյթնի չափ զոր յանձնած է իր
դպրոցական գոյքերուն եւ գնած
կալուածին հետ քաղաքին Թաղական
Խորհրդին սա բացարձակ պայմանաւ
որ յառաջիկային բացուելիք աղջկանց
վարժարանին անունը դրուի։

«Հոսիսիմանց վարժարան»։

Բնկերութեան լուծուելուն եւ դրպ-
րոցին փակուելուն բուն պատճառներն
եղած են այդ սքանչելի գործէն բուն

օգտուողները, այսինքն ծնողները։

Վերջին վարժուհին [կարծէ հոս յի-
շել ստացած ամսականը 7 1/4 օսման-
եան ոսկի հաւասար է 166 ֆր. ոսկիի,
գաղափար մը տալու համար ընկերու-
թեան ըրած վարձատրումին վրայ]
խնդիրներ մը ունենալով ընկերու-
թեան անդամներուն մէկ քանին հետ
գործը հետզհետէ ցաւալի համեմատու-
թիւններ առեր է՝ մանաւաղ ծնողներե-
րուն, աւելի ճիշդը կրնորուն խառ-
նուելովը, որով ընկերութեան գէտ
տխմար հակառակութիւն մը ծագեր է,
ինչ որ պատճառ եղեր է վերջապէս
անշահախնդրութիւն աշխատող անձերուն
զգուշացը յառաջ բերելու, որով
ստիպուել են ընկերութիւնն ալ դադ-
րեցնել ու դպրոցն ալ գոցել։

Յետոյ է որ, կրնոր ու օրիորդներ,
նախկին աշակերտուհիներ Հոսիսիմ-
եանց Բնկերութեան վարժարանին, ի-
րենց մէջ ընկերութիւն մը կազմած են
նոյն անունով՝ նպատակ ունենալով
աղջկանց վարժարանին նիւթական
պէտքերուն օգնել։ Այդ ընկերութիւնն
է որ մինչեւ ցարդ կը շարունակուի,
խիստ պզտիկ սահմանի մը մէջ սա-
կայն։

Իրաւամբ կարծէ փափաքիլ որ կա-
նանց արդի Հոսիսիմեանց Բնկերու-
թիւնը կանոնաւոր կազմակերպութիւն
մը ստանալով իր նպատակը լաւագոյնս
կարենայ գործադրել ի պատիւ Ռուս-
չուքի Հայ կրնորուն։

Հոգաբարձութիւն
Աղգ. Երկաւր Վարժարանաց
Ռուսուղի
(Կնիք)

ԱՂԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարկազէ մեզ կը տեղեկացնեն
թէ դրամ հաւաքելու նպատակաւ
հոն գացող Դաշնակցութեան ներ-
կայացուցիչը՝ իր զէմ ցցուած ժո-
ղովրդային ակաւներէն ահաբե-
կած՝ ստիպուել է առնել քաղել։

— Կրիկիկոյ կաթողիկոսական
ընտրութիւնը տեղի պիտի ունե-

տակ գտաւ զինքը եւ խնդրեց որ միասին բերլին
մէջ մտնէ։

Տէրվիշը չմերժեց... այլ՝ ընդհակառակն ըլլալով,
աչքերուն մէջ ուրախութեան ճառագայթ մը փայլե-
ցաւ։

Անմիջապէս Լուծիքի աղայի ետեւէն գնաց։
Լուծիքի աղա պաշտօնատունը տարաւ զինքը։

— Նստի՛ր, բարի տէրվի՛շս, ըսաւ Լուծիքի աղա։
Հիմակ կրնաք խօսիլ... Ես չատ կը սիրեմ քեզի
պէս տէրվիշներու հետ տեսակցութիւններ ընել։

— Ուրախ եմ, պէ՛յս, միմիջեց տէրվիշը։
Երկու խորհրդաւոր անձերն իրարու երեսը հա-
յեցան եւ՝ վայրկեան մը խորին լռութեան մէջ՝
մտածեցին իրենց խօսելիքներու վրայ։

— Իրա՛ւ, բարի տէրվի՛շս, յարեց Լուծիքի աղա՝
խզելով լռութիւնը, ըսէ՛ ինձի թէ ի՞նչ գաղափար
ունիս մարդերու ճակատագրին վրայ։

— Ժակատագրի՛ր... հառաչեց տէրվիշը՝ վշտալի
ձայնով մը։

Ու ձեռքը ճաղատ ճակտին տանելով կարծես յի-
շել ուղեց իր ըսելիքները... Յետոյ ոտքի ելաւ...
չորսդին պտտուց իր աչքերը... սկսաւ զոգոց-
չել... սկսաւ... հառաչել...։

Ասիկա չատ չտեսց։

Իսկոյն գետնին վրայ փռուեցաւ... ցաւագարի մը
պէս դալարուեցաւ... ու փրփուրը բերնէն դուրս
թափելով՝ սկսաւ հեկեկալ...։

Ու այդ գերագոյն տանջանքներու մէջ տէրվիշը
մրմնջեց։

— Ետապպի՛ր, Ետապպի՛ր...։

Լուծիքի աղա սոսկումով մը վեր ցատկեց նստած

տեղէն... քայլ մը ստաւ ու ձօնեցաւ տէրվիշին,
որ շարունակ կը գալարուէր, կը փղձկէր՝ ելքերա-
կան հոսանքէ մը անցուած էութեան մը պէս։

— Տէրվի՛շ... տէրվի՛շ... բացադանչեց Լուծիքի
աղա կակազած ձայնով մը։

Բայց ձայն մը չառաւ... պատասխան մը չըստա-
ցաւ։

Ան ատեն պարտաւորուեցաւ սպասել։ Միայն թէ
սենեկին գուռը գոցեց որ մէկը չիզար այդ տեսա-
րանին վրայ։

Հազիւ թէ տասը վայրկեան անցած էր թէ չէ՝,
ահա՛ ձիւ մը հանեց տէրվիշը... Ու սկսաւ՝ այսպէս
խօսիլ՝

— «Մտիկ րիէ՛, պէ՛յս։

«Աստուած՝ որ իր արդարադատ ձեռքով վճեց
ճակատագիրը տառապեալ մարդերու։

«Աստուած՝ որ ամենուս վրայ կը նայի իր ամե-
նաթափանց աչքերով...։

«Ա՛յն Աստուածը տէրվիշին կըսէ։

«Երջանկալից է ա՛յն մարդու ճակատագիրը...։

«Բարի է ա՛յն մարդու վախճանը...։

«Մէկ խօսքով՝

«Բաղդաւոր է ա՛յն մարդը, որ թշուառներու,
անկեաններու, բոլոր լքեալներու վրայ կը նայի
խղճի մը կատարեալ գիտակցութեամբ ու զգացումի
մը գերագոյն վեհութեամբ...։

«Ո՛վ պէ՛յ,

«Մարդերու ճակատագիրը փոփոխական է...
բաղդին խաղը կը դարձունէ զայն անխել մը
պէս։

«Երեկուան ժպտող աչքը՝ կարտասուէ...։

«Ձուարթ ու փթթող հոգին կը թօշնի արեւա-
դարկ ծաղիկի մը պէս։

«Յոյսդ ո՛չ մէկ փառքի վրայ մի՛ հաստատեր...։

«Փառքը վաղանցուկ երազի մը պէս կը սահի...։

«Իսկ յոյսդ՝ առկայծ ճրագի մը նման կը մարի։

«Դուն բարի եղի՛ր... առաքելի եղի՛ր... վե-
հանձն եղի՛ր...։

«Բայց բարի, առաքելի եւ վեհանձն ըլլալու հա-
մար, պէտք է՝ աշխարհիս ունայնութեան վրայ
չնայիս...։

«Ունայնութիւնը սրտիդ գուռը կը փակէ...։

«Ունայնութիւնը քու հոգին կը խղճէ իր խաւա-
րային դալարումներուն մէջ...։

«Կեանքը ծովի մը պատկերացումն է։

«Հանդարտ, անուշ ու նախանձելի՞ է այսօրուան
կեանքը... սպասէ՛, մի՛ յոխորդար, ... ահա՛ վա-
ղըն ալ փոթորիկ մը կը պատէ զայն... սեւ ամպ
մը կուգայ կիջնէ անոր վրայ... ու կիյնաս անիծ-
եալ տնկումի մը մէջ...։

«Օ՛հ...։

«Աստու իմ խօսքերս չեն... ասոնք ա՛յն Աստու-
ծոյ պատգամներն են որ վճած է մարդերու ճակա-
տագիրը։

«Այն Աստուծոյ՝ որ քեզի կը հրամայէ։

«Կոչումիդ մէջ՝ անշահախնդիր, իսկ գործունէ-
ութեանդ մէջ՝ պարտաճանաչ եղի՛ր...։

(Շարունակելի)

հայ յառաջիկայ Սեպտեմբեր 19, հինգշաբթի օր, Ընտրութեան պիտի մասնակցին եկեղեցական և աշխարհական 60 պատգամաւորներ:

Պատրիարքարանի պատուիրակը Տ. Մովսէս Եպս. հինգշաբթի օր գաղղիական շնորհաւով Պոլսէն ճամբայ ելած է դէպ Ատանա:

— Պատրիարքական փոխանորդը Ի դիմաց Պատրիարքարանի անցնելու շաբաթ օր ներկայ գտնուած է Անգլիոյ թագաւորին թագազրուած հանգէսին առթիւ դեսպանատան մատուցած զոհաբանական աղօթքներուն:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԵԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սթանպուլ Բուլ Բաթրիգի կէտէն հափթա Երեսուց սերայընա կիտուպ, Սուլթանըն սեր քեթիւ պի իլէ կէօրիւնէն, Մաքէթոն. եանըն մուծիպի թէքսիֆ աշպարհն. տէն պահա իտէր, վէ պու պապուէ Սուլթան իլէ կէօրիւնէն իչիւն հուզուրա գապուլ օլընմանըն թէքսիֆ էլլէր:

Բուլ Բաթրիգին շու միւրաճաւ թըր րէսմի տարիէլէրտէ բէթ թէքսիւր հուսուլա կէթիւրտի: Տէր հալ Մաքէթոնիայա պիր ալայ սաքէր կէօնտէրիլէսի Բաթրիգին պու միւրաճաւթընա համլ օլընըյօր:

— Թիւրքիստա չիֆթճիլիկի իլէրէթմէք մագսէտի իլէ զըրաթ նէզարէթի տարիէսինտէ պիր գօմիսեօնը մախսուս թէքիլ օլընմըն տըր, իշպուլ գօմիսեօնըն գարարը իզըրէ պուլտան սօնրա 6 տան 10 եաշընտա չօճուզլար վէ 7 տէն 11 եաշընտա գըզլար իչիւն իլիմ թահսիլի մէճպուրի օլաճագ տըր. եանի հէր պիր քէօյտէ մէթէպլէր աշըլաճագ ըմըլ:

Մէարիֆ գանուլմէսինտէ պու մապլա պէնտլէ պուլտան էվվէ տախի մէվճուտ ըտը իսէտէ, անլէր պու անէ գատար իճրա օլընմատըրը կիպի, շու սօն գարարըն տախի իճրա օլընմալաճագը պիզճէ չիւրհէսիլ տիւր:

— Լիբանան բրէնսինի ինթիլիսպը իչիւն Գապը Ալի ալթը պէօյիւք տէվլէթլէրին էլիլէրինի ապլէթ իթտի: Յագաթ Աւստրիա էլիլի Պապը Ալիին իւշ նամզէտ կէօթէրմէսինի թալէպ էլլէտի: Էլիլէր մէզքիւր զէվաթտան պիրինի ինթիլիսպ իտուպ, անըն թայինիէն իճագէթ վէրէճէքլէր: Պապը Ալի իսէ եալընըզ պիր քիչի կէօթէրմիշ իտի:

— Միլիթէվէֆա Սատրապա խալիլ-Րիֆաթ բաշանըն մախտու մը Ահմէտ-Րիֆաթ քէնտի եկէնի իլէ՝ եանի իքի սէնէ մուգատուէմ գաթլ օլընան պէօյիւք պիրատէրի Ճէվատըն մախտու մը իլէ՝ պէրա:

պէր գազմըլ տըր: զիրա գաթիլին իտամը իչիւն վէրիլմիշ օլան հիւքմի Սուլթան իճրա իթտիլմէմիշ իտի:

Պուլար գալմագտան էվվէլ բէտէրլէրինի մէզարը իւզէրինէ կիտուպ տուա իթմիշլէր: Սուլթան պուլտու տուլմաքնտա, Ահմէտի սէրայա կէթիլտուպ հիւանի թէվէտճուհ կէօթէրմիշ, վէ պուլտուլէ պէրապէր անըն իւզէրինէ տըզգաթը արթըրմըլ ըտը: Փագաթ նիհայէթ էլիլտէն գաշըրտը: Պուլիքի աւըլգատէլէրին գաշմաք Սթանպուլըն րէսմի տարիէլէրինտէ պէօյիւք հէլէճուհ հասըլ իթմիշ օլտըրը թալմա պիլտիլիյօր:

— Իթալիա Պահրը սէֆիտ տօնանմաքնըն գօմտնտանը ամիրալ Բօլիւպօնըն Օգոստոս նիհայէթլէրինտէ Սթանպուլ կէլէճէկինի իթալիա էլիլի Պապը Ալիյէ պիլտիլմիշ:

— Շէհրիմիլտէ նէշը օլընան Մուշալլէն թիւրք կազէթաք սօն նօմէրօսըն իլք պէնտի թիւրքլէր հագգընտա շու սաթըրլարլէ պաշլամըլ տըր:

«(Պու միլլէթ իսլաճ օլմագ) տէյօրլար»:

«Պու եապանիլէրտէն խալիլ կէլիլ, տիյէ գաթէն քիմ իտտաա իտէյօր»:

«Պէօյլէ միլլէթէ պէօյլէ հիւքիւմէթ. պէօյլէ հիւքիւմէթէ պէօյլէ սալթանաթ վէ խէլաֆէթ, վէ ալէլ ումուլ պէօյլէ պաշա պէօյլէ թըրաշ տէկիլ մի»:

«Սուլի իտարէ իլէ գօգմուշ, տախիլէն չիւրիւմիւշ պիր իտարէի աթէլ թէմիլլէյէպիլիլ: Թիւրքիա արթըք եանըյօր. էհալի հալէն ուլլայօր»:

ՏԱԽԻԼԻԹԷ

Սօպրանիէ Օգոստոս 1 տէ գաբանմըլ օլուպ, մէպուլար քէնտի եէրլէրինէ ալտէթ իթտիլէր:

— Եարըն պիլթիւն Պուլկարիտա գաղա մէճիլա աղալարըն ինթիլիսպաթը իճրա օլընմագ տըր:

— Պուլկարիտան պաղը շէհրիլէրինտէ մարուֆ պաղը էլմէնիլէր վէ անլէրին ալաթլարը թարաֆընտան իճրա օլընան ուլլընըզլըզլար տախիլիլ Նազըրընընաւարը տըզգաթընը ճէլպ իթմիշ օլմաղլէ, Նէզարէթտէն խուսուսի պիր «սիրքիլէր» իլէ վարնա, Յիլիպէ, Բուսալաք, Պուրկազ վէ Սիլվէն միլթէսարըֆլարըն էմիլլէր վէրիլուպ, միլթէճաքըրարըն թէտիպ վէ չիւրհէլիլէրին թաղրիպ ու թէպիտ օլընմալարը էմր օլընմըլ տըր:

ԻՆԿԻԼԹԷՐԱՎ ՎԷ ԻԹԱԼԻԱ

Պահրը Սէֆիտ վէ Շարք մէսէլէրինտէ իթալիա վէ ինկիլթէրա պէյինտէ օլ տէրէճէ իթիլաֆ վէ տօթլըզ մէվճուտ տըր քի, ինկիլիզ Պահրը Սէֆիտ տօնանմաքնըն

իթալիա տօնանմաքնըն իլէ միլթէթիգ պուլընմաքնըն իչիւն Լօնտրա տան էմր վէրիլմիշ տիւր:

— Ինկիլիզ հիւքիւմէթի Մ. Գրիլէրին թրանսլատա կիթմէսինէ տալա րազի օլմայօր:

— Ահմէտ Շահը Օգոստոս 19 տա Լօնտրայա կիտուպ, պիր հաֆիտ օրատա գալմաճագ տըր:

— Լօնտրա օսմանը սէֆիլի Սուլթան թարաֆընտան Գրալ էտուարտա խանէուսըն-Ալ-Օսման մուրուսս նիշանըն իհտա իթտի:

— Ինկիլիզ տօնանմաքնըն միւս թէմլէքաթ թարաֆընտան վէրիլէճէք սէնէպի թախսիտ թըն մըզտարը:

Աւստրալիա	200,000	Լիւրա
Իւմիւտ Պուրնու	50,000	»
Ենի Չէլլանտա	40,000	»
Նաթալ	35,000	»

Քանաթա իչիւն խուսուսի պիր մուգալէլէնամէ իմզալանմըլ տըր:

Բ Ո Ւ Ս Ի Ա

Խարգովտա պիր զիյնէթ էանաւընտա՝ միլթէսարըք բրէնա Օպօլէնսքի իւզէրինէ 4 էլ րէվօլլէրա թըրմըլ: Օպօլէնսքի պօյնուտան քէզա անըն եանընտա պուլընան գապլիլէ րէյիսի ալաղընտան եալէլէնմիշլէր տիւր:

Ճանի տէրտէսթ օլընմըլ:

ՄԻԻԹԷՆԷՎԻԹԷ

Սօն իւշ սէնէ զարֆընտա թիւրքիստաքի ալթուլ վէ կիւմիւշ մա. տէնլէրինտէն 46 քիւս ալթուլ վէ 14942 քիւս կիւմիւշ չըզմըլ օլտըլը հիւքիւմէթտէն Պանգ Ոթօմա. նա րէսմէն պիլտիլմիշ տիւր:

— Պիր վագըրթտան պէրու Մը. սըրտա բէք չօգ գալպ ագէլէր թէտաֆիլտէ պուլընտըլը հասէպի իլէ, էհալիտէն վուպու պուլան չիքեյէթլէր իւզէրինէ, Մըքըր հիւքիւմէթի իշի թաաղիպ իտէրէք, ալիլէն գալպսգանլը պուլմուշ տըր: պուլար իքի էվլըրալը ըմըլար: պուլարըն գալլալարը վէ ալաթլարը տախի էլէ կէշմիշ տիւր:

Ի Թ Ա Ւ Ի Ա

Չարըն Բօմայը զիյարէթ իտէ. ճէկի միւնսիպէթլէ չիմտիտէն Բօմատա հաղըրըզլար կէօրիւն. մէքտէ տիւր:

— Վէնէտիկտէ կէշէլէրտէ երգըլմըլ օլան Սուրը Մարկոս քիլիսէսինի մէշհուր չան մաշէլինի հէնիտէն հաբմագ իչիւն զըրալիցա Մարկարիտա 20,000 ֆրանք վէրմիշ տիւր:

ԻՐԱՆԻԱՆԻ ՊԱՏԱՍԵՐԱՆԵՐԸ

Մուշէղ Ղազարեանը փնտոզը թող զիմէ խմբագրատուն:

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ, 3 Օգոստոս	
ՉԱԽԻԹԷ	
ՊՈՒՂՏԱՅ	Ենի մալլէր
Վալիս Լիպ.	57-58 հ.թ. 8.50/ 8.60
Արապալիպ.	53-62 հ.թ. 7.- / 10.40
ԱՐԲԱ,	
Վալիս 100 քիւ	9.20/ 9.40
Արապա 45-50 լիպ. հ.թ.	5.70/ 6.70
ՉԱՎՏԱՐ	7.- / 7.20
ՐԱԲԵՏԱ, Ենի մալլէր	
100 քիւսը ալթուլ ֆր.	19.40/ 19.20
Կիւնտէ 100-120 տարապա պուլտայ	
վէ 80-90 տարապա արապա կէլմէքտէ տիւր	
Ենի մալլէրտէն:	
Վալիս մուլմէլէսի ալթուլ ֆըրանլէ, արապա կիւմիւշլէ: Նարօլէտն 21 հիսապը իլէ:	

ԲԱՄՈՒՔ

Վարնա մաղաղալարընտա իրլիք սաթըլարը:	
Ինկիլիզ իրլիկ Ն. 8-14	10.-
» » Ն. 18-24	12.-
Ենիլի իրլիք Ն. 8-14	9.30
Աթըլմըլ բամուք հողա	1.80
Բամուլի ֆիլաթլարը եիւքսէլմէքտէ տիւր:	

ՊԱԳՍԱԼԻԹԷ

Վարնա բիւցալարընտա պագալիլէ մալլէրին պու կիւնքի ֆիլաթլը, ալթուլ ֆրանք իլէ:	
ԳԱՎԷ	1.42/ 1.70
Շէֆէր Նէմցէ	52
» (Քէսմէ) սանտըգ	28.-
Բիլիլմէ Ճարոն չուվալը հող	-
» Ֆիլիպէ	32.36
» Ինկիլիզ »	26.-
» Բիլիլ »	47.-
ԿԱՉ Սանտըգ	6.40
Չէթիլ ՆԱՂԸ քիւս	- .80/- .95
ԵՈՒՄՈՒՐԹԱ 100 տէտ 3.50/ 3.80	
ԳՈՒՐՈՒ ԻԻՋԻԻՄ	- .40

ՍԱՐԱՅԻԹԷ

Նարըլէտն 20.80 ֆրանք	
Օսմ. լիւսար 22.90 ալթուլ ֆրանք	

Ա.Չ.Դ

Չայնագրագէտ երաժշտապետ մը՝ որ թէ Պօլիս եւ թէ արտասահմանի մէջ երկար տարիներ պաշտօնավարած է եւ յաճախարարելի վկայականներ ունի ի ձեռին, պաշտօն կը փնտոէ: Նոյնպէս Հայերէնի, Ֆրանսերէնի եւ չափագիտութեան հմուտ ուսուցիչ մը կը լուրջ պաշտօն ստանձնել Պուլկա-րիոյ վարժարաններէ միոյն մէջ: Եթէ պահանջուի Գերմաներէն ալ կարող է դասախօսիլ:

Ա.Չ.Դ

Գուրան Երկրագործական հանգէսի տեղւոյս նոր գործակալն է Տ. Համբարձում Քիրիշեան ի Մուսալլա: Բաժանորդը թող զիմէն յիշեալի ու ստանան իրենց թերթերը:

Նոր բաժանորդագրուիլ եւ կամ հատով գնել փափագողները նաեւ պէտք է նոյնի գիմէն:

Մէկ թիւի գինն է 1 լէվ:

ԹԱՏՐՈՆ ՊՈՐԻՍ

Յառաջիկայ հինգշաբթի գիշեր պիտի ներկայացուի, «Վէսէլլօ» Հայ գերասանական խմբին կողմէ ի նպաստ Տ. Գալմիսեանի եւ երկու գերասաններու, ԱՅՏԱ հոշակաւոր ողբերգութիւնը 5 արար:

Խիստ ծիծաղաշարժ գաւեշտ մը Պ. Ա. Պէնլեանի կողմէ:

ԵՐԳ ԵՒ ՊԱՐ:

Տոմարկները այսօրու ընէ կը ծախուին Տ. Չարպանէլեանի գրատունը:

Одговорникъ Н. Драгулевъ

Чет. на Хр. Н. Войниковъ—Варна